# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԵՔ-ԳՀԾՁԲ-18/19

ք. Երևան

«25» «12» 2017թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ֆ/Ա Իվան Գյուլումյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ԱՅԿ մասնագետի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև
երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը
ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝
ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N
2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության
իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի
«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը
(հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը
կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն
սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է
www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների
նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի
պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու
օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում
ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է
տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա
ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում
պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման
արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային
գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-
ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած
բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն
ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և
Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության
միջոցներ:
3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի
ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա
մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահման-
ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային
գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված
հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը
կազմում է **793700 (յոթ հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:**
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում
հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:
Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել
ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով
անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու
միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման
արձանագրության հիման վրա՝ պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքվող
համապատասխան համաձայնագրով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե
արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման
ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն
իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև
տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝
պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին
չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից
գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ
հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1]
5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու
դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

---

[1] Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքված լինելու դեպքում
տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում
հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության

դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Գ.Զ[illegible]

**ԿԱՏԱՐՈՂ**
Ֆ/Ա Իվան Գյուլումյան
ք. Երևան, Կոմիտաս 35ա, բն 17
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163007428523

Իվան Գյուլումյան
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված N 1
«25» «12» 2017թ. կնքված
ԵԲ-ԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Չ/Մ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50331160/304 | Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը<br>Թվային ավտոմատ հեռախոսակայանի ինժեներ-տեխնիկ<br>Դերը<br>Սպասարկել և անհրաժեշտության դեպքում վերածրագրավորել թվային ավտոմատ հեռախոսակայանը, պարբերաբար վերահսկել վարչական շենքի ներքին հեռախոսացանցը, գնահատել դրանց տեխնիկական վիճակը, բացահայտել չաշխատող հանգույցները, նշել հնարավոր պատճառները, գնահատել նորոգման հնարավորությունը և աշխատանքների հնարավոր ծավալը:<br>Ստացիոնար ցանցի օպերատորի հետ պարզաբանել և լուծել առաջացող տեխնիկական խնդիրները:<br>Սպասարկել հեռախոսային խոսակցությունների բիլինգ ծրագիրը:<br><br>Խնդիրների բնագավառ 1 Հետազոտել ԱՀԿ-ն և ներքին հեռախոսացանցը<br>Աշխատանքային գործընթացը<br>Կատարել ամենօրյա պրոֆիլակտիկ ստուգայց:<br>Օգտագործելով համապատասխան գործիքներ, սարքեր և նարմարանքներ հետազոտել թվային ավտոմատ հեռախոսակայանը, նրա առանձին հանգույցները: վարչական շենքի ներքին հեռախոսացանցը, գնահատել դրանց տեխնիկական վիճակը, բացահայտել չաշխատող հանգույցները, նշել հնարավոր պատճառները, գնահատել նորոգման հնարավորությունը և աշխատանքների հնարավոր ծավալը:<br>**Կատարման չափանիշները**<br>ԱՀԿ-ի, ներքին ցանցի կամ հանգույցի տեխնիկական վիճակը բնութագրված է, բացահայտված են չաշխատող դետալները կամ հանգույցները, դրա պատճառները, գնահատված է նորոգման հնարավորությունը, սահմանված է աշխատանքների ծավալը:<br>Խնդիրների բնագավառ 2 Նորոգել, վերածրագրավորել ԱՀԿ-ն և փորձարկել ներքին հեռախոսացանցը<br>Աշխատանքային գործընթացը<br>Ըստ անսարքության բնույթի ապամոնտաժել կամ կազմատել | հատ | 793700 | 12 | ք.Երևան Ն.Զարյան 27 | Մինև 2018թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխան հանգույցը, վերացնել անսարքությունը` կատարելով նաև միջանկյալ ստուգումները, հավաքել, տեղադրել նորոգված հանգույցը, կատարել վերջնական ստուգում, վերածրագրավորում և փորձարկում:<br><br>Կատարման չափանիշներ<br>Սարքավորման անսարքությունը վերացված է, այն նորմալ աշխատում է, նորոգման աշխատանքները կատարված են տեխնոլոգիաներին համապատասխան, գործիքներն ու սարքերն օգտագործվել են ըստ իրենց նշանակության, նյութերն օգտագործվել են խնայողաբար, համաձայն սահմանված նորմերի կատարվել են միջանկյալ ստուգումներ և վերջնական փորձարկում:<br>Գիտելիքները<br>· էլեկտրոնիկայի հիմունքները<br>· ճարտարագիտական գրաֆիկա<br>· ծրագրավորում<br>·օգտագործվող նյութերի տեսակները և հատկությունները մոնտաժային գործիքների և չափիչ ստուգիչ սարքավորումների նշանակությունները և աշխատանքների սկզբունքները<br>· աշխատանքի անվտանգություն և առաջին օգնություն: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Գ... [illegible] _______________

**ԿԱՏԱՐՈՂ**
Ֆ/Ա Իվան Գյուլումյան
ք. Երևան, Կոմիտաս 35 ա, բն 17
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163007428523

Իվան Գյուլումյան _______________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«25» «12» 2017թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ________
հհ ____________________
______________________
հվհհ __________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ________
հհ ____________________
______________________
հվհհ __________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ____________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ____________________ և
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____ե «________________ե 20 թ. կազմված՝, հիմք ընդունելով նախագծած Ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. գնման հայտը Պայմանագրով ամրագրված

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 2.1
«25» «12» 2017թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20__ թ. ____________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__ թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
## (պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «____» «____» 2017թ.

Ֆ/Ա Արմեն Ուդումյան (անձնագիր AN 0691756, տրված 25.10.2013 կողմից 004), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ԵՔ-ԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի հաստատած «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

**ԿԱՏԱՐՈՂ**

Ֆ/Ա Իվան Գյուլումյան
ք. Երևան, Կոմիտաս 35 ա, բն 17
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163007428523

Իվան Գյուլումյան ____________
ստորագրություն
Կ.Տ.

## 1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

| | |
|---|---|
| 2. Ներկայացման ամսաթիվը՝ | "___"___ 20___թ. |
| 3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ | Ֆ/Ա Իվան Գյուլումյան |
| 4. Վճարողի բանկը՝ | «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ |
| 5. Վճարողի հաշվի համարը՝ | 163007428523 |
| 6. Վճարողի ՀՎՀՀ՝ | 02542059 |
| 7. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 8. Շահառու՝ | Երևանի քաղաքապետարան |
| 9. Շահառուի ՀՎՀՀ՝ | 02593108 |
| 10. Շահառուի բանկը՝ | Կենտրոնական գանձապետարան |
| 11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ | 900015211429 |
| 12. Գումարը թվերով և բառերով՝ | 79370 (յոթանասունինը հազար երեք հարյուր յոթանասուն) |
| 13. Արժույթը (բառերով և կոդով)՝ | ՀՀ դրամ (AMD) |
| 14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ | Պայմանագրի կատարման ապահովում |
| 15. Պայմանագրի ծածկագիրը՝ | ԵՔ-ԳՀԾՁԲ-18/19 |

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը կից՝ --- էջ 17.

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/__________/<br>/__________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/__________/<br>/__________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /__________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>«___»«___» 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /__________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ «___»«___» 20___թ. |